



# Melkonian Alumni & Friends

P. O. Box 1587  
Glendale, CA 91209  
Tel. (951)453-9917

Website: [www.melkonianforever.org](http://www.melkonianforever.org) Email: [coordinator@melkonianforever.org](mailto:coordinator@melkonianforever.org)

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը  
Դատական Ատեան Կը Դիմէ  
Մելգոնեան Հաստատութիւնը Բաց Պահելու Համար

Կապ: Ռաֆֆի Ցնծալեան  
951-453-9917

Յունուար 21, 2005

Յանուն աշխարհացրի Մելգոնեան Սանուցի, Պոլսոյ Պատրիարք Բարձրաշնորհ Մերոպ Արք. Սուրբաֆեան, նկատի ունենալով որ Պոլսոյ Պատրիարքարանը Մելգոնեան եղբայրներու կտակին սկզբնական ինամատարն էր, Յունուար 13, 2005 թուին, Գալիֆորնիայի Բարձրագոյն Ատեանին դիմելով դատ բացաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան դէմ, ապահովելու համար գոյատեւումը Մելգոնեան Կրթական Հաստատութեան որպէս լաւագոյն հայեցի դաստիարակութեան կեդրոն ամբողջ Սփիւռքի տարածքին, եւ պարտադրել Կարապետ Մելգոնեանի նուիրատուութեան եւ համաձայնութեան պայմաններու գործադրութիւնը: Դատական աշխատանքները պիտի հետապնդուին Լոս Անձելըսի ՄԳԳարլի եւ Ռօզըն փաստաբանական ընկերութեան կողմէ:

Նուիրեալ շրջանաւարտներ ամէնուրեք՝ միասնաբար կ'ընդդիմանան իրենց սիրելի եւ Հայ մշակոյթի գանձ՝ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակման: Շնորհիւ Բարերար Կարապետ Մելգոնեանի դրամական մեծ նուիրատուութեան, 1923-ին Պոլսոյ Հայոց Պատրիարք Գշն. Զաւէն Եպս. Տէր Եղիայեան՝ հիմնեց Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը Կիպրոսի մէջ: Այդ թուականէն ի վեր, ՄԿՀ-ն Հայ ժողովուրդին տուած է բազմաթիւ սերունդներ ուսուցիչներու, բանաստեղծներու, արուեստագէտներու, գրողներու, բժիշկներու, փաստաբաններու, գիտնականներու, եւ ազգային առաջնորդներու: Մելգոնեանը իր ներկայ դիրքով Կիպրոսի մէջ, կը դառնայ Հայկական մշակութային կամուրջ մը, Սայր Հայրենիքի եւ միլիոնաւոր հայորդիներու միջեւ՝ որոնք գաղթած են Երոպայ, Ամերիկաներ եւ կամ այլուր:

1925 թուականին, Պոլսոյ Հայոց Պատրիարքը, Կարապետ Մելգոնեանի համախոհութեամբ՝ Հ. Բ. Ը. Միութեան փոխանցեց ամբողջ կտակը, ներառեալ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, այն հասկացողութեամբ եւ համաձայնութեամբ որ Հ.Բ.Ը.Մ-ը յանձնառու կ'ըլլայ դպրոցը պահել Կիպրոսի մէջ եւ շարունակել դաստիարակել Հայ պատանիներ սերունդէ սերունդ: Ներկայիս, Նիկոսիոյ մէջ 40 արտավար հողի վրայ Մելգոնեան Դպրոցը ուսում կը ջանքէ 200-է աւելի ուսանողներու, որոնք ամէն տարի կուգան հոն՝ աշխարհի ամէն անկիւններէն:

Վերջերս, Հ. Բ. Ը. Միութիւնը յայտարարեց որ Մելգոնեան Վարժարանը պիտի փակուի 2005-ի դպրոցական տարեշրջանէն վերջ: Աշխարհի ամէն կողմ, Մելգոնեանի շրջանաւարտները միացած են ուժգնութեամբ դիմադրելու Վարժարանը փակելու եւ կալուածները ծախելու որեւէ ծրագրին, եւ թոյլ չ'տալու որ բռնաբարուի Կարապետ Մելգոնեանի տեսլականը եւ նախատեսութիւնը: Ցարդ՝ Հ.Բ.Ը.Մ-ի ուղղուած անհատական կոչերը Մելգոնեանը պահպանելու համար՝ անպատասխան մնացած են: